## ՏԱՐԲԵՐԱԿ 1

**1. Բացատրել տրված բառազույգերի իմաստները, յուրաքանչյուրով կազմել մեկական նախադասություն:**

հառել-հառնել հրավեր-հրավերք

հատել-հատնել հասկացություն – հասկացողություն

(2 միավոր)

**2. Գրել հետևյալ օտարաբանությունների հայերեն համարժեքները:**

ստատուս նոստալգիա

ֆիլիալ ռոտացիա

կորպուս սիտուացիա

մենեջմենտ բրասլետ

(2 միավոր)

**3. Տեքստից դուրս գրել այն բայերը, որոնցում կան հիմքակազմության սխալներ, և դիմացը գրել ճիշտ ձևը:**

1. Ծանր-ծանր կուտակվող ամպերը մթնացրին տան՝ ծխից սևացած պատերը: 2. Ամռան շոգին խորհուրդ է տրվում օգտագործել մաշկը խոնավեցնող քսուքներ: 3. Ապստամբության առաջնորդը կուրացնել տվեց իշխանին՝ իրենց չմիանալու համար: 4. Գնալ, հեռանալ դեռ չի նշանակում փախնել: 5. Ավտոտեխսպասարկման կենտրոնում շատ կարճ ժամանակամիջոցում կարող են մգացնել նաև մեքենայիդ ապակիները:

(1 միավոր)

**4. Տեքստից դուրս գրել հնացած կամ սխալ բայաձևերը և դիմացը գրել ճիշտ ձևերը:**

1. Ըստ գյուղնախարարության տվյալների՝ այս տարի ներ է մուծվել ավելի շատ սերմացու, բայց չի պակասել գյուղմթերքի արտահանումը: 2. Հակիրճ ներկայացրեցի վարվեցողության տարրական նորմերը, որոնց կիրառությունը պարտադիր է ցանկացած պաշտոնյայի համար: 3. Պարզվեց, որ մենք ուղղակի խաբնվել ենք: 4. Մի՛ մոռանար խոստումդ և այնպես արա, որ ստիպված չլինեմ հիշեցնել քեզ այդ մասին: 5. Ինքնախաբեությունը բարոյական ինքնասպանություն է, որի մեջ մարդկային բոլոր կրքերը հանգստանում են:

(1 միավոր)

**5. Տեքստի մեջ գտնել և ճշտել համաձայնության և խնդրառության սխալները:**

1.Ոչ մի ծաղիկ, ոչ մի տերև չէին շարժվում քամուց: 2. Ամենայն ազնիվ ցանկություն ողջունելի է, բայց ինչ-ինչ որոշում պիտի կայացվի: 3. Հարցը տակավին քննարկման փուլում է, ուստի ես այժմ թույլ չեմ տալիս արտահայտվելու: 4. Արածդ սխալի համար պիտի ներողություն խնդրես հորդ: 5. Երևի հեղինակները համարձակություն կունենան հրաժարվել այս դասագիրքը տպագրել տալուց: 6. Մարդը, որ ընդունակ չէ բարի գործ կատարելու, լավ բան մի՛ սպասիր:

(2 միավոր)

**6. Կետադրել համր բնագիրը:**

1. Լավ հիշում եմ դարբին Գևորգի Արամի քեռու մուրճի տակից նոր դուրս եկած սայլանիվների երկաթից պատրաստված օղերից մեկը հին էր մյուսը կարկատված ճաքճքված: 2. Աղմուկից սարսափած ձիավորը փախչում է լեռները ինչպես կփախչի պարտվածը դեպի փրկության բերդը: 3. Շատ խանութների առաջ հենց հրապարակում դարսված են ապրանքի հակերը որովհետև խանութները լիքն էին և լիքն էին պահեստները: 4. Արձանի գլուխը ջարդել են բարբարոսները և մնացել է միայն պարանոցը որը այնուամենայնիվ վկայում է թե ինչքան գեղեցիկ էր այն գլուխը: 5. Անուշ արեք Աբիսողոմ աղա մտքում ասաց Մանուկ աղան:

(2 միավոր)

**7. Գր. Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի մասին ո՞վ է ասել. «*Հայի կրակված սիրտն է, որ այրվում է երկիրը բռնած, տանջված հոգին է, որ մռնչում է մինչև երկինք»:***

1. Հ. Թումանյան

2. Ավ.Իսահակյան

3. Վ. Տերյան

4. Պ.Սևակ

(1 միավոր)

**8. Քաջ Նազարի ո՞ր հատկանիշն է, որ ընդհանուր չէ, տարբեր է Հ. Թումանյանի և Դ.Դեմիրճյանի համանուն ստեղծագործությունների մեջ.**

1. Նազարը չափազանց վախկոտ է, ծույլ ու պարծենկոտ:

2.Այդ անարժան մարդը բախտի պատահականությամբ բարձրանում է փառքի աստիճաններով:

3.Նազարը մարդու հաջողության նախապայմանը ոչ թե խելքը կամ քաջությունն է համարում, այլ բախտը:

4. Նազարը իր ապաշնորհության պատճառով գահընկեց է արվում:

(1 միավոր)

**9. Նշված գաղափարներից ո՞րը գեղարվեստական մարմնավորում չի ստացել Շիրվանզադեի «Քառս» վեպում.**

1. բուրժուական այլանդակ բարքերի սուր քննադատություն

2. «ոսկի երիտասարդության» արատների մերկացում

3. օտարերկրյա նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի արտացոլում

4. աշխատավորական խավի մարդկանց հոգու վեհության, հարստության ու բարոյական մեծ ուժի ցուցադրում

(1 միավոր)

**10. Ո՞ր պնդումը ճիշտ չէ Մ. Նալբանդյանի վերաբերյալ.**

1. Մ.Նալբանդյանը ձգտում էր համաեվրոպական ազատագրական շարժման ոլորտի մեջ առնել նաև հայ ժողովրդի ազատության հարցը. այդ նպատակով նա հանդիպումներ է ունենում իտալացի գարիբալդիականների և ռուս վտարանդի հեղափոխական գործիչների հետ:

2. Նա գտնում էր, որ ցարական կայսրության փլուզումը կհանգեցնի բազմաթիվ ազգերի, այդ թվում և հայերի ազատագրությանը:

3. Մ. Նալբանդյանը՝ որպես լուսավորիչ, ազգային վերածնության երաշխիքներ է համարում կրթությունն ու դաստիարակությունը:

4. Մ. Նալբանդյանը, սուրը ձեռքին, մասնակցել է Զեյթունի ապստամբությանը և պայքարել է Արևմտյան Հայաստանը թուրքերի ձեռքից ազատագրելու համար:

(1 միավոր)

**11. Ո՞ր պնդումը գեղարվեստական մարմնավորում չի ստացել Ավ. Իսահակյանի «Համբերանքի չիբուխը» պատմվածքում.**

1.Օհան ամին ըմբոստ գյուղացու կերպար է. նա ընդվզում է գյուղի հարուստների և զոռբաների դեմ, որոնք զրկել էին թույլերին ու խեղճերին, զավթել բոլորի հողերը:

2. Օհան ամին և իր ընկերները փախչում են սարերը, սակայն շուտով ներողամտություն են հայցում իշխանությունից և դադարեցնում պայքարը:

3. Օհան ամին գտնում է, որ միայնակ մարդը անկարող է կռվել աշխարհի չարիքների դեմ. հարկավոր է համատեղ պայքար՝ հաջողության հասնելու համար:

4. Օհան ամու կարծիքով, իսկական մարդու էությունը լավ գործ կատարելն է. դրա մեջ է գտնում անցողիկ կյանքի իմաստը:

(1 միավոր)

**12.Շարադրության առաջարկվող թեմաներ՝ «Անկեղծ խոստովանություն», «2016թ. ապրիլյան պատերազմի հերոսները» /ընտրել առաջարկված թեմաներից մեկը/:**

(5 միավոր)